

կին Մամիս 3 ր., Մինաս քահանայ Միրանանց 3 ր., Պետրոս քահանայ Կուսկեանց 5 ր., Գեորգ Ավերբեկեանց 25 ր., Գեորգ Կիրեյանց 25 ր., Գեորգ Խեչոյեանց 3 ր., Գեորգ Պետրոսեանց 5 ր., Միքայէլ Միմնեանց 10 ր., Մարտին Զաչե-տեանց 3 ր., Խաչակ Խումարեանց 3 ր., Զաքար խիթարեանց 5 ր., Գովհանէս Տէրաթեանց 10 ր., Պետրոս Խոսեանց 10 ր., Ստեփ. Կիրակոսեանց 10 ր., Պետրոս Պետրոսեանց 5 ր., Անդրէյ Եղիկեանց 10 ր., Գեորգ Պամպուկեանց 10 ր., Գեորգ Պետրոսեանց 5 ր., Ստեփ. Տէր-Արիստակէսեանց 2 ր., Զով. Ապրանեանց 3 ր., Մով. Անդրեով 2 ր., Գեորգ Խումարեանց 1 ր., Լեւորիս Բաղդաձէ (Վրացի) 3 ր., Զոհրաբ Կիրակոսեանց 3 ր., Սարգիս Գալստեանց 3 ր., Գաս. Նարինեանց 1 ր., Գալիթ Զարթով (Տրէյ) 3 ր., Գեորգ Գրիգորովեանց 1 ր., Ստեփան Խումարեանց 10 ր., Доктор Станкевич 3 ր., Արէլ Եսարեանց 5 ր., Թաթևեանց և Վախտանգեանց 5 ր., Զով. Թաթևեանց 1 ր., Միքայէլ Մամուկեանց 5 ր., Գովհանէս Մինասեանց 2 ր., Լիկուշայոս Միմնեանց 3 ր., Անդրէյ Մինասեանց 3 ր., Գեորգ Տէր-Գովհանէսեանց 3 ր., Միքայէլ Մէյ-րազեանց 3 ր., Անդրէյ Ապրեանց 3 ր., Սարգիս Զովաթեանց 1 ր., Բաղդան Ռանեանց 10 ր., Զով. Աթէնեանց 1 ր., Զարիթիւն Կիրակոսեանց 1 ր., Աղէք. Շոշիեանց 10 ր., Միմն. Գեմուրեանց 1 ր., Կարապետ Բաշադեանց 1 ր., Զով. Ղարապետեանց 3 ր., Բաղդան Զարթովեանց 5 ր., Գրիգոր Խիչանեանց 1 ր., Գարրիէլ Սեփեր-զուով (Վրացի) 5 ր., Զով. Մամուկեանց 10 ր., Գեորգ Զովաթեանց 3 ր., Կարապետ Եղիայեանց 5 ր., Մարգ. Շափերեանց 1 ր., Ղազարոս Ախ-նաղեանց 2 ր., Խաչատուր Ղարապետեանց 1 ր., Գովհանէս Նարինեանց 2 ր., Միքայէլ Զեդեկեանց 1 ր., Միքայէլ Մանուկեանց 1 ր., Զաքար Լիմ-նաղեանց 1 ր., Խաչոյ Կարապետ (Վրացի) 1 ր., Մեսրոպ Նարինեանց 1 ր., Գրիգոր Միմնեանց 3 ր., Գովհանէս Գրիգորեանց 1 ր., Նիկողայոս Օրդեկեանց 5 ր., Նիկողայոս Բաղդասարեանց 1 ր., Ամբրոջ Գումարեան 404 րուր, որից հանելով փոստի ծախս 3 ր. սրա հետ ուղարկում եմ 401 ր., որ խնդրեմ հասցնէք Վանի սովատաններին:

Մինաս քահանայ Միրանանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՌԵՐ

Ընթերցողին յայտնի է որ մենք արդէն ուղարկեցինք յօգուտ Վանի սովատաններին 3200 րուր և խմբագրութեան մէջ մնում էր 93 ր. 15 կ. Գորանից յետոյ հաւարկեցաւ դարձեալ 992 ր. 74 կ., որ մնացորդ 93 ր. 15 կ. հետ կանէ 1085 ր. 89 կ. Գետարկի 28-ին ուղարկեցինք այդ գումարից սովալուկներին խնամով և Պալի կնտորեանական մանածողովին 1000 րուր, իսկ հանելով մնացորդ 85 ր. 89 կ., գումարից հեռագրի ծախսը 3 ր. 25 կ., մնում է ուրեմն խմբագրութեան մէջ 82 ր. 64 կ. Այդպիսով երկու չարթովայ ընթացքում մենք ուղարկեցինք յօգուտ Թիւրքիայի հայ սովատաններին 4200 րուր:

Մենք շատ կողմերից լսում ենք զանազաններ Թիւրքիայի վիճակի թիմական վերադառնալու պ. Գեորգ Բարխուդարեանցի դէմ, թէ նա շատ անհոյգ է և թող իր պարտաւորութիւնների վերաբերութեամբ, Ասում են որ պարտքը բոլորովին անտու է առնում ազգային դպրոցների դրութիւնը, և ամբողջ օր նրան Թիւրքիայի բուլղարներում զբոսնելիս են պատահում Որբան յայտնի է պարտքը ստանում է տարեկան 2000 րուր ուսմիկ:

Փետրվարի 29-ին «Մշակ» ունէր արդէն 870 բաժանորդ, Ուրեմն այս տարի հազար բաժանորդ ունենալու համար մեզ պակաս է միայն 130 բաժանորդ, Երջ կայ, ուրեմն, որ և այս տարվայ ընթացքում մենք կունենանք հազար բաժանորդ:

Այս տարի «Մշակ» հատով շատ լաւ է ծախում Թիւրքիայի Եթէ Թիւրքիայում բաժանորդ քիչ ունենք, գոնէ միջնարկան է որ հատով շատ է ծախում մեր թերթը:

Ստացանք յօգուտ Վանի սովատաններին 29 րուր Թիւրքիայի ընակվող ախալցխացի և ալէքսանդրապոլցի հետեւալ անձինքներից: Ախալցխացի Թիւրք. Գայանէ Զարաբեան 2 ր., Ստեփան Այվազեան 5 ր., Նիկողայոս Միրանեան 5 ր., Գրիգոր Սողոմոնեան 5 ր., Զարուհի Միմնեան 3 ր., Վաղարշակ Խաչատուրեան 2 ր., Համազասպ Խոճիկեան 1 ր., Ալէքս. Կարապետ Կարապետեան 3 ր., Միքայէլ Մանուկեան 3 ր., Պաղպատար Անեղիկեանց 1 ր., Մէլքոն Ապաճեան 1 ր. և Մնացական Ղազնեան 1 ր.: Ընդամենը 29 ր.:

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են, փետրվարի 21-ից

Բէկը ողորկում այդ զովատանութիւններով, կրկին խիստ նոյնի կողքը, նա մի քանի դարմանակի թիւքներ գործեց, մի քանի ճարպիկ պլուտոյներ տուց անտուտեանի զբան հրապարակի վրա, և այդ բոլոր գործողութիւնների մէջ երեւում էր ազնիւ երկվորի գեղեցիկ յատկութիւնները և նրա անձը կառավարող տղամարդի հմտութիւնը ամենի ձիւները զսպելու մէջ:

Եստոյ նա ցած իջաւ, և անձը յանձնելով իր ծառաներից մէկի ձեռքը, պատուիրեց, որ մանածէ, որովհետեւ ձին բաւական ջրածնէ էր:

Ճանուցեալ իր պատուիրի հիւրի ձեռքից բռնած, մտան օդան (հիւրանոց), որ միշտ նրանց զաւր, բաւական զարդարած և կարգի էր դրած:

Յատակը սփռած էր պարսկական թանգազին գորգերով. պատերի մօտ մինը միւսի վրա չարված էին փափուկ բարձր նստելու և թիկն տալու համար, և մի գեղեցիկ օթոց յատկապէս պատրաստված էր բէկի բազմոցի համար:

Այժմ տանտուէրը, հրաւիրելով իր հիւրին նրան, ասաց իրանց նրանում ընդունված քաղաքավարական ոճով:

—Իմ տունը ձեր տունն է. աչքիս և զիւրիս վրա տեղ ունիք. ես ձեր խոնարհ ծառան եմ. որ դիւր ձեր ստորկներն են, իսկ կանայք՝ ձեր ազատները. բարով և հազար բարով էք եկել. աւան ինչ որ ունեմ, ձեզ փէշքէշ է. Հրամանէք, հրամանէք, հրամանէք, խնդրեմ:

Բէկը շորհակալութիւն յայտնեց, և խաչօր որդիներից մէկը մօտենալով, ասելով հանեց նրա կարմիր կոշիկները, և նա առաջացաւ, նստեց իր համար պատրաստված բարձի վրա, որ բռնում էր հիւրանոցի պատուաւոր կողմը. Նրա մօտ նստեցին, որպէս մեծաւորներ, իր հօրեղոր որդիներից երկուսը, և մի քանի ուրիշ ազգականներ: Նրանք իր մօտը մնաց օրայի մէջ, և ձեռքները իրանց գոտիներում խրած տարձանակների վրա դրած, խոնարհութեամբ կանգնել էին բէկի սպասում իսկ ծառաների միւս մասը դուրս գնաց, հոգ տանելու որսորդական շներին և ձիաներին, որ նոյն ժամանակ վայելում էին տանտուէրի մարագի:

որ կայսրի գահակալութեան օրվայ հանդէսը այդ տեղ աւելի փառաւոր անցաւ քան թէ գուցէ միւս գահակալան քաղաքներում: Որվայ մէջ նշանաւոր անցք այն էր, որ հայոց օրիորդական և տղայոց դպրոցների բոլոր աշակերտները թւով մօտ 900 ժողովել էին մի ընդհանուր գահինում առաջ քաղաքային ուսումնարանի աշակերտների հետ կայսրի համար մաղթանքներ կատարելու: Տեսարանը սրտաշարժ էր. հայ, հրէայ, վրացի և մասնատական երեխայք, այդ օրը մի գզգզմունքով էին օգնելով, քաղաքագլուխը խօսեց մի ազգուճառ, որի մէջ ասեց. «Ձեր թիւք՝ մի ուժեղ բառակոն է և հիանալի է ձեր գէշքը. ձեր գէշքը գրեմ է, որից, ի միջի այլոց պիտի սովորէք և այն, որ լինէք հաւատարմ չպատաններ պետութեան և սպասկար անդամներ այն հասարակութեան, որին դուք պատկանում էք»: Գեղամանի այս ճառը, որ ասվեցաւ ուսուցչին լեզուով, երեխաների կողմից ուժգին ծափահարութիւն յարուցեց: Մաղթանքից յետոյ քաղաքագլուխը տնօրինեց մի պոզի քաղցրեղէն բաժանել մանուկներին:

Երկուսն էլ մեզ գրում են. «Փետրվարի 18-ին կայացաւ Գումայի նիստը: Գուման գրեթէ միաձայն վճռով արդար ճանաչեց քաղաքագլուխ Գորգանեանցին իր գործունէութեան մէջ, իսկ Հալի Միրզա Հուսէյն բէկից վճռեց մօտաւորապէս 2000 ր. մշտա պահանջել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻԱ

Լրագիրները լուր յայտնեցին, որ Բ. Գուոր դիտարութիւն ունէր վերակազմել իր գործը: Զօրքերի վերակազմութեան նախադէմը, որ արդէն հաստատված է սուլթանից, թէ առաջ և թէ այժմ գաղտնի է պահվում: Լրագիրները միայն հետեւեալ տեղեկութիւններն են յայտնում այդ վերակազմութեան մասին:

Զինուորական մինիստրութեան թիւքէտը կը լինի միայն 4,000,000 լիրա: Զօրքերի թիւը կը պակասանայ մինչև 100,000

րարքները: Թէ բէկը և թէ իր ծառաները լոյորը զինուորված էին սրբով, վաճաններով, ատուճանակներով, հրացաններով և իրազաններով, որոնց կողմից չէր հեռացրին, թէ և բարեկամի տուն միտան: Վերորդ թէ իր տնում և թէ գրտում, թէ խաղաղութեան ժամանակ և թէ կռուի ժամանակ, զէնքերը իր մարմնից չէ հեռացնում: Զէնքը զբրի մարմնի անբաժան անդամներից մէկն է:

Խաչօր որդիներից մի քանիսը, որ այդ ժամանակ դարձել էին դաշտից, անդադար դուրս էին գալիս և ներս մտնում, կատարելով հօր զանազան պատուէրները: Բայց նրանց վրա զէնքը չը կային: Սկզբում փողերով, նախուս ֆինլանդների մէջ մատուցին սուրճ առանց չաբիշի:

—Ո՛ր է Ստեփանիկը, չէ երևում, հարցրեց բէկը.—ես սովորել եմ այստեղ գալու ժամանակ սուրճը միշտ նրա ձեռքից ընդունել:

Ճանուցեալը, թաղանթով իր ներքին տնաճութիւնը, հրամայեց, որ կանչեն Ստեփանիկին:

Ներս մտաւ Ստեփանիկը, ուրախութեան ծայրափայլում էր նրա անմոլ գէղի վրա, նա մօտեցաւ բէկին և համբուրեց նրա ձեռքը: (Քրդի ցեղապետները իրանց ձեռքը համբուրել են տալիս): Բէկը շոյելով նրա մետաքսաւոր մազերը, ասաց.

—Գու գիտես, թէ ինչ լաւ բան եմ բերել քեզ համար:

—Գիտեմ, պատասխանեց Ստեփանիկը կարմիրով.—մի գեղեցիկ այծեամբ ձագ է. տարայ խոտ տուցի, չը կերաւ:

—Տեսնում էք, նա արդէն ստացել է իր ընծան, ասաց բէկը, դառնալով դէպի տանտուէրը:

—Գիտեմ, որ ինձ համար է, պատասխանեց Ստեփանիկը.—ես էլ տարայ:

—Դէ, հիմա գնա, խաղա քո այծեամբ հետ, ասաց բէկը:

Պատանին գլուխ տուց և հեռացաւ:

—Շատ խելք տղայ է, խօսեց բէկը Ստեփանիկի գնալուց յետոյ.—Երեւ, նա զգո՞ւ է մնում, երբ ամեն անգամ, ես այստեղ գալու ժամանակ, էնձանից մի ընծայ չէ ստանում:

մարդ: Իւրաքանչիւր տարի զօրքերի թիւը լրացնելու համար կը հաւաքեն 40,000 և լրիտասարդներ 20 տարեկան հասակի, ազգութեան և կրօնի մէջ զանազանութիւն չը լինելով: Գործող զօրքերի ծառայութեան ժամանակամիջոցը կը լինի 3—4 տարի: Նրեք տարի ծառայութեան ժամանակամիջոցը նշաւ նախկին արտիլերիայի և ինժեներների համար: Մատայութեան ժամանակամիջոցը լրացնելուց յետոյ, զօրքերը առաջ բեղիկները մէջ կը հաշուէ, իսկ յետոյ մուստաֆիէի գում: Գործող զօրքերի բառայութիւնների զինուորների թիւը մօտավոր են հասցնել 300 մարդու, իսկ առաջ 450 էր լինում: Գործող զօրքերի թիւը լրացնելու մօտավոր են հաւատարակել բեկիկի ուժեղացնելով: Կայսրութեան ամբողջ երկիրը մօտավոր են 11 զինուորական շրջանների բաժանել, այդ շրջաններից իւրաքանչիւրը խաղաղ ժամանակ կուսնայ 12 բառայութիւններից կազմած գործող զօրքերի մի զիվիլիա, իսկ պատերազմի ժամանակ, բացի այդ մի զիվիլիա բեկիկներից կազմած:

Ահա այն բոլորը, որ առ ժամանակ յայտնի է թիւքաց զօրքերի վերակազմութեան մասին: Զը նայելով այդ տեղեկութիւնների պակասութեանը, այնուամենայնիւ կարելի է խմանալ, որ զօրքերի վերակազմութիւնը հիմնված է յայտնի սկզբունքների վրա: Այդ սկզբունքները հետեւեալներն են. 1) զինուորական վարութեան բարձր իշխանութեան հակախտնորոգանքը, 2) ընդհանուր զինուորացիութիւն, առանց զանազանութիւն գնելու կրօնի և ազգութեան մէջ և 3) զինուորական ծախսերի պակասեցնելը:

Հակախտնորոգանքութեան գաղափարը առհասարակ անյարմար է մահմետական աշխարհի համար, մանաւանդ այժմ, երբ ինքը սուլթանը իր գործունէութեամբ հակառակն է հաստատում: չը հաւատալով ոչ դիւ և ոչ իշխ, սուլթանը ինքը ամեն գործի մէջ խառնվում է: Գործերի այսպիսի դրութեան ժամանակ Թիւրքիայի զինուորական կազմակերպութիւնը

—Նա մեզ չունի, դուք էք այսպէս սովորելու, բէկ, պատասխանեց տանտուէրը, ակամալ ծիծաղելով:

—Ա՛յ, ինչ լաւ սարեր են ձեր սարերը, քաւր խաչօ,—փոխեց բէկը իր խօսքը.—ամեն քաղաւ հանդիպում ես որսի. այծեամբներ, եղջիրներ, եղջիրները խուճերով են ման գալիս. կաթաներին և վայրենի աղանձներին հաշիւ չը կայ: Այլ այծեամբ, որ ստացաւ Ստեփանիկը, իմ բառիները բոլորովին կնդանի բռնեցին: Բայց մի տեսնէիք, ինչ լաւ բարակներ ունեմ այժմ. մի զոյգ նոր ստացայ Զիւնցիների ցեղապետից: փոխադրեց ես մի զոյգ ջորի ուղարկեցի, Բայց խօսքը մեր մէջը թող մնայ, յորինեալ օւլաւաւորներից: Բայց բարակները հրաշալի են, մարից աւելի արագ են թռչում:

Բէկի խօսակցութիւնը ամբողջ ժամանակ վերաբերում էր իր շներին, որսորդութիւններին, ձիերին, առաքալութիւններին և զանազան տեսակ քաղաքագործութիւններին, որոնց մասին մի առանձին բաւականութեամբ էր խօսում: Ճանտուէր խաչօն, թէ և ձանձրալի էին այդ օրհնարութիւնները, բայց նա համբուրութեամբ լսում էր, և երբեմն իր կողմից համակրութիւն էր ցոյց տալիս:

Արդէն ճաշի ժամանակ էր: Յատակի վրա տարածեցին սեղանի սփռոցը և նրա վրա չարեցին անաղին ափսէներով փլաւ և խորոված ամբողջ զառներ: Մի քանի ամաններին մէջ դրած էին զանազան տեսակ քաղաքագործութեան զորքերը, որոնք խաչօն, թէ և ձանձրալի էին այդ օրհնարութիւնները, բայց նա համբուրութեամբ լսում էր, և երբեմն իր կողմից համակրութիւն էր ցոյց տալիս:

—Գուք ձեր ոչխարները դեռ չէք ուղարկել տնու, հարցրեց բէկը տանտուէրից:

—Դեռ չենք ուղարկել, պատասխանեց տանտուէրը.—դեռ եղանակի վրա յոյս չէ կարելի զննել այդ մեր ապրիլ ամիսը իր վերջին գոտիներին ունի, սպասում եմ, մինչև անցնելու:

—Զերմը ու ցուրտը Աստուծոյ ձեռքումն է:



Հայրի թէ կարելի լինի հակահետադարձական անփոփոխական սկզբունքները վրա հիմնել, երբ այս փորձին կազմակերպութեան ժամանակ դէպի օրինակներ ոյժերը և բարեմասութիւնը պէտք է կատարեալ հաւատ ունենայ: Այս բոլորը ի նկատի ունենալով, զինուորական այդ վերահսկողութիւնը միայն թղթի վրա կը մնայ, առանց իրագործվելու, մասնաւոր որ թէ զինուորական միջնորդութեան զլխաւորը և թէ նրա օգնականները մնում են նոյն Ոսման-փաշա, նոյն Գերլիշ-փաշա և այլն, այս-ինքն այնպիսի անկէր, որոնք ծնվել են հին ձեռն ժամանակ և որոնք ամեն տեսակ վերահսկողութիւնները անկարելի գործ են համարում:

Ընդհանուր զինուորագրութեան գաղափարը թիւրքի համար աւելի օտար և աւելի անիրագործելի է: Այդ հարցի մասին իւրաքանչիւր թիւրք շատ որոշ է խօսում: Ընդհանուր զինուորագրութիւնը աւելի է թէ թիւրքերի և թէ քրիստոնեաների համար: Քրիստոնեաներին Մահմեդի զօրքերի կարգում կանգնելը բոլորովին հակառակ է թիւրքի պետական և կրօնական կազմակերպութեանը: Թիւրքացի զօրքերի կրօնական ըստ-կրօնականութիւնը վրա հիմնած կազմակերպութեան ոյժը կը թուլանայ քրիստոնեայ տարրի պատճառով: Կրօնական բաժանումներ, ատուութիւն և արհամարհանք, փոխադարձ անհաւատարմութիւն, այս բոլորը կը տիրեն թիւրքացի զօրքերի մէջ: Քրիստոնեայ ժողովուրդները, որոնք դարձեալ ստորկան են և զիկ կորցրել են զինուորին հարկաւոր բարոյական յատկութիւնները, զինուորական ոգին: Անկասկած այդ քրիստոնեաների զինուորական ոգին և տաղանդը կարելի է նորից գործիցնել, բայց գործիցնող ոյժը երբեք չէ կարող լինել կիսալուսնի դրօշակը, այն դրօշակը, որ դարձեալ աշխատել է ունենալ այդ ոգին, որ դարձեալ ձգտել է քրիստոնեաներին ըստ-կրօնական դարձնել: Այդպէս են մտածում իրանք թիւրքերը քրիստոնեաների զինուորական ծառայութեան մասին: Իրանք քրիստոնեաները աւելի էլ թշնամութեամբ են վերաբեր-

վում այդ նոր հարցին: Քրիստոնեաները աւտում են թիւրքերին, խորը համոզման են թիւրքիայի քայքայման մէջ և նրանցից իւրաքանչիւր պազուլթիւն, բայց հայերից, հայ-վում են այս կամ այն պետութեան կողմը: Հայերն էլ ձգտում են անկախութիւն ստանալ, ուրեմն իրանց արևմտի թիւրքիայի պաշտպաններ բոլորովին վնասակար է քրիստոնեայ ժողովուրդների բարոյական և կենսական շահերին:

Այդ վերահսկողութեան արդուութեանը ոչ ոք չէ հաւատում, այդ գործի վրա ամենքը նայում են ինչպէս դատարի ֆրանկների վրա, որոնցով թիւրքիան կամենում է գրադնշել արևմտեան Ներքապին և նրանից փող ստանալ:

Բոլոր այդ առածների ծմբարտութիւնը հաստատում է և նրանով, որ կառավարութիւնը այնպիսի հեշտութեամբ է վերաբերվում դէպի այդ զլխաւոր վերահսկողութիւնը, որ կարծես նա բոլորովին բաղադրեալ չը լինի: Իւրաքանչիւր պետութեան զինուորական կազմակերպութեան մեքենան աւելի բաղադրեալ է լինում, երբ այդ պետութեան մէջ գտնական ազգութիւններ են ապրում և այդ ազգութիւններից կազմվում են զօրքերը: Թիւրքիայի զինուորական կազմակերպութեան մեքենան աւելի էլ դժուար պէտք է լինի:

Բ. Գուշը զինուորական ծախսերի քաջաները սրտով ցանկանում է, նա մի անգամ զօրքերին 48 ամիս ուժիկ չը տուց: Իր նպատակին հասնելու համար թիւրքացի կառավարութիւնը կամենում է զօրքերը զօրքերի թիւը պակասեցնել: Այդ միջոցը մասամբ հասցնում է նպատակին: Միայն մասամբ միայն կը պակասեն, որովհետև խնայած գումարի մասը հարկաւոր կը լինի ուժեղացած Իշիկի զօրքերի վրա ծախսելու:

ԽՏԱՆԻՍ

Հռոմից «ГОЛОСЪ» լրագիրը ստացել է հետևեալ թղթակցութիւնը:

Այն կրկնուր, որ արևում էր թէ կառավարութեան, թէ ազգային ժողովի և թէ

սենատի մէջ վերջապէս վճռվեցաւ: Լաւ թէ վատ այնու ամենայնիւ վճռվեցաւ: Թագաւոր ինքը բաց արեց պարլամենտը, որի բացման ժամանակ ներկայ էր և թագուհին: Քրոնիս և վեց նոր սենատորներին նշանակելու հրամանը կարգաւորվում էր բոլոր վոյոյզներում:

Իտալիան վերջապէս հանգիստ չունէ քաշից: Բայց այդ հանգիստութիւնը երկար կը տևի թէ ոչ, ոչ որին յայտնէր: Պարլամենտական խառնակութիւնները, միջնորդների անհամաձայնութիւնը, ամենատեսակ անկարգութիւնները, չափազանց խռնակները, Իտալիայի ներքին գործերը: Պարլամենտի երկու թշնամական կուսակցութիւնների ներքաշայցիչները, հանրապետական Կայրոյի և քաղաքական Կարեախի, որոնք երբ տարի շարունակ պատերազմում էին միմեանց հետ և մոտաւորապէս իւրաքանչիւր վեց ամենակից յետոյ կըլուէին միմեանցից միջնորդական պաշտօնը աշուճելու միացան և մէկ միջնորդութիւն կազմեցին: Պարզ երևում է, որ խառնակութիւնը չափազանց էր և այն առարկան, որի պատճառով հակառակորդները միացան, չափազանց նշանաւոր: Այդ առարկայի նշանաւորութիւնը ստիպեց հակառակորդներին միանալ: Այդ առարկան հարկերի և ուրիշ մի քանի հարցերի օրէնքի վերանորոգութիւնն էր:

Բայց իւրի և ջրի այդպիսի անանկալ միութիւնը ցանկալի հետևանքներ չունեցաւ և միջնորդութեան գործերը առաջ չէին գնում: Միջնորդները ազգային ժողովի մէջ կարգաւորում էին մի բան անկ, բայց նոքա անկարող եղանակներով համաձայնեցնել ազգային ժողովի հետ:

Իտալական սահմանադրութեան յօդուածներից մէկը իրաւունք է տալիս թագաւորին սենատորներ նշանակել և այդ յօդուածը նշանակելի սենատորների թիւը չէ չափաւորում: Այդ դէպքում թագաւորը, ընտրելով սենատոր անդամներին, ի նկատի է ունենում, թէ նոքա ինչքան կարող են օգնել առաջարկող միջնորդին այս կամ այն հարցը սենատի մէջ անցկացնելու համար: Նոր համաձայն յայտնի եղաւ որ թագաւորը մտաւոր է օգուտ քաղել յիշեալ իրաւունքից, բոլոր պատասխան տարրերը Իտալիայում վոյոյզից: Ամենից առաջ վոյոյզի մէջ էին սենատի անդամները, որոնց պէտք է հետաքննել թագաւորը և նրանց տեղ նորերին նշանակել և այդպիսով սենատի մեծամասնութիւնը պէտք է աննշան փոքրամասնութիւն դարձնել: Վոյոյզի մէջ էր սեն-

նատի այն կուսակցութիւնը, որ կարծում էր թէ իր անդամների թիւը կը պակասի, վերջոյ վճռւմ էին այն սենատորներ, որոնք յոյս ունեին ժողովրդից ընտրվել:

Ժողովները բացակայեց առաջ ժողովուրդի մէջ լուր էր տարածվիլ, որ թագաւորը ներկայ չէ գտնվի: Այդպիսի լուրերը միշտ վրդովում են հասարակութիւնը իւրաքանչիւր սահմանադրական պետութեան մէջ: Վերջապէս խօսում էին, որ թագաւորը մտադիր է 60 սենատորներ նշանակել: Ամեն բան հանգստացաւ, երբ թագաւորը ներկայացաւ պարլամենտը և մի կարճ ճառով նրան բաց արաւ: Վերջապէս յայտնի եղաւ, որ նշանակված 60 սենատորների տեղ, թագաւորը միայն 26 է նշանակել: Թագաւորի ճառը ոգևորութեամբ ընդունվեցաւ:

Նոր նշանակված սենատորների մասին այս-քան միայն յայտնի է, որ նոքա կառավարութեան իւրաքանչիւր առաջարկութիւնը կը պաշտպանեն:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՈՒՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 փետրվարի: «Правит. Вѣстникъ» լրագիրը հարգուում է, որ ժանդարմների շէնքի գնեկալ Կրեմլինի իր խնդրի համաձայն արձակված է իր պաշտօնից և իր նշանակված է Պետական Խորհուրդի անդամ, մնալով գեներալ-ադյուտանտի կոչման մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 փետրվարի: Պետական բանկի 5%, տուժանի առաջին շրջանի արժէ 94 ռ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ.: Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերի արժէ 225 ռ. 50 կ., երկրորդ 224 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսերը 89 3/8 ռ., երկրորդ 90 ռ., երրորդ 90 ռ., ուսկի 7 ռ. 77 կ.: Ռուսաց 1 ռուբլի Լոնդոնի վրա 25 3/8 պէնս, առաջ 100 ռուբլի Կրեմլինի վրա 127 մարկ 25 պէնս, Փարիզի վրա 265 3/4. 25 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 մարտի: Ներկէ Ս. Պետերբուրգից Եղիշուրգի դուքանի տանող երկաթուղու գնացքը 390-ը վերստի վրա դիպաւ ապրիլի գնացքին: Նրկու վազաններ կոտրված են: Մարդիկ խնայող տարաբաղում թիւն չէ պատահել:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

Քաւոր խաչ, ինչ որ լինելու է, կը լինի, պատասխանեց բէկը:—Մեր ոչնաւորները մի շարքից աւել կը լինի, որ տարի են արօտ: Բայց զիտէք այս տարի որքան շուտ սպառվեցաւ մեր պաշարը, հովիտները քանի որ է, ուտելու հաց չունեն:

Տանուտէրը հասկանալով, թէ ինչ է ուզում ասել բէկը, պատասխանեց.

—Միթէ մեր հացը ձերը չէ, հրամայեցէք, ոտքան ալիւր պէտք է, ես կուզարկեմ:

—Թող չէն ու հաստատ մնայ ձեր տունը, ասաց բէկը:—Ի հարկէ այդպէս է. ու՛ր է մեր մէջ Լոկուիւնի գրեւ: Ինչ որ իմն է—բռնէ է: Ինչ որ բռնէ է—իմն է: Այդպէս չէ, քաւոր խաչ:

—Աստուած էլ գիտէ, որ այդպէս է...—Ո՛րքան ալիւր ուզարկեմ:

—Առ այժմ մի տանն եղան բեռն բաւական է. Կրկն կը տանենք, ձեր ալիւրները պէտք ունենաւ չէն:

Տանուտէրը մի ակամայ ժպիտ գործեց իր թոխուր դէմքի վրա, և գլուխը շարժեց, որ նշան տար նրա համաձայնութեանը:

Ճաշից յետոյ Ստեփանիկը ձեռքեր լուանալու ընդունեց, բոլորը լուացվեցան, և ապա պատասխան իր ձեռքով սուրճ տուց: Բէկը հրամայեց իր պատուով կանգնած ծառաներին, որ գնան գրուով իրանց ընկերների հետ ճաշին, ուր պատրաստված էր առանձին սեղան, բակի մէջ տարածված կապույտ գլուխներով և տանում էր, թէ նրա տոհմային վկայականները հասնում են մինչև երեկոյի խմորի ժամանակներին, թէ այդ ձին սերվում էր Երազման ամենաշնորհ խմորների տոհմից և այլն:

—Բայց շատ թանկ պիտի նստի իմ վրա այդ ընկերների ընծան, վերջացրեց բէկը իր պատասխանով:

—Ինչպէս, հարցրեց տանուտէրը:

—Միթէ չեմ իմանում, ամենապարզը՝ պէտք է

հարկւր ոսկի պարգեւել վալիի ծառային, որ բերել է այդ ձին:

Տանուտէրը այժմ հասկացաւ բէկի փորձարար, թէ ինչ մտքով էր եկել իր տունը: Բայց, որպէս ասում են, խելօքը կտուր գցելով, պատասխանեց.

—Ինչ կայ, տուցէք, հարկւր ոսկին շատ չէ մի այսպիսի ձիու համար:

—Բարի ու՛ր է տուել փող, ասաց բէկը մի փոքր բարկացած ձայնով:—այդ անխճած արծաթը ձեր, հայերից, մօտ է գտնվում միշտ:

Բէկի մօտ նստած աղքատները, որ բոլոր ժամանակը լուռ էին, խօսակցութեան մէջ մտան: Նրանցից մէկը ասաց.

—Գուք էլ միթէ փողի դարդ էք քաշում, բէկ:

—Քաւոր խաչն էր և թողի, որ դուք փողի կառուութիւն ունենաք:

—Աստուած վկայ է, որ այդպէս է, ասաց միւսը:

—Քաւոր խաչն շատ լաւ մարդ է, աւելացրեց երրորդը:—Նրա համար բոլոր հայերի մէջ չը կայ:

Յետոյ խաչն նկատեց, որ հակառակ իր հաճութեան և կամքին, իր վզին դրեցին հարկւր ոսկին, և կատակաբար տեղիք չը տալով, պատասխանեց.

—Ես հազար ոսկու համար ես բէկի սիրտը չեմ կտրել:

—Շէն մնայ ձեր տունը, ձայն տուցին քրդերը, Տանուտէրը վնդ կացաւ, և դուրս գալով օդանոց, իր մօտ կանգնեց մեծ որդուն և ասաց, որ ծածուկ գնայ յարգանքով թագաւոր ոսկիներից հարկւր հատ բերէ:

—Ինչի համար է, հարցրեց որդին:

—Ի՜նչ չեմ իմանում, որ անօրէններն եկան, կերան, խմեցին, հիմա պէտք է մի եղ իշքի ըստ ինչ էլ տանք, պատասխանեց հայրը տխուր ձայնով:

—Աստուած ձեր քօքը (արմատը) կտրէ, անխճածներ, ասաց որդին, և կիծող վեր առնելով, դիմեց դէպի յարգանքով, որպէս թէ գնում է յարդ բերելու:

«Իշքի» քրդերին նշանակում է ատամների վարձ, մի այսպիսի վարձ ստանում էին քրդերը մի ժամանակ:

Նակ, երբ չորս էին անում հայի հացը ուտել, կամ նրա տանը հիւր լինել: Լիւրեակը պարտաւոր էր վճարել, եթէ չը տար, դուրս կենթարկվէր իր հիւրի անդուծ գանախաբութեանը: Այժմ թէ է այդ սովորութիւնը մասամբ վերացել էր, բայց ոսկիներից դարձեալ ստացվում էին, միայն ստանալու եղանակը փոխվել էր և աւելի քաղաքավարի ձև էր ստացել:

Մինչև ծերունու դաւանող, հիւրանոցում, քերդերի մէջ անց էր կենում հետևեալ խօսակցութիւնը.

—Ի՞նչ չը բերէ ծերուկը ոսկիները, ես կը հրամայեմ այս բոլորին նրա տանը կրակ տան, ասաց բէկը կատաղած կերպով:

—Հարկաւոր չէ, հանգստացնում էր ծրան աղքատներից մէկը:—Խաչն բարի հայ է. հարկաւոր չէ նրան զիտանել: Նրա դուռը միշտ բաց է եղել մեր առջև, և ինչ որ կամեցել ենք, տարել ենք: Խաչն լաւ մարդ է, պէտք չէ նրա աղ ու հացը մոռանալ:

Նշոյն միջոցին ներս մտաւ ծերունին, և ոսկիների քանակը գնելով բէկի առջև, ասաց.

—Աստուած է վկայ, որ հողուն համար էի պահել, որ երբուսեւ ուլում գնամ և մուգդուրի դաւանում, բայց ձեր խաթը չը կտորեցի, բէկ:

—Սուտ մի խօսիր, քաւոր խաչ, շատ ունես, չանտ, այդ ես իմանում եմ, պատասխանեց բէկը, վեր առնելով քաւոր, և առանց համարելու, իր զրպանը դնելով:

Երեկոյեան զով ժամանակն էր արդէն, Բէկը հրամայեց ձիաները պատրաստեն, որ ճանապարհ ընկնին: Ես դուրս եկաւ օդային և բակի մօտ տանուտէրի նստեան էր գալիս, մինչև ամեն ինչ կը պատրաստեին: Նա տեսաւ Ստեփանիկին, որ այժմանի նստելու էր: Մտեցաւ նրան.

—Լաւն է, հարցրեց նրանից:

—Լաւն է, բայց այդ մէկ ոտը չները կծել են, վիրաւորվել է:—այդ ոչինչ, ես կը բժշկեմ: Խեղճ անասուն, երեկ, ցաւում է, դրա համար ոչինչ չէ ուտում, պատասխանեց պատանին, կապելով այժմանի վէրքը:

—Ստեփանիկ, ես տեսնում եմ, դու անասուններ սիրում ես, դրա համար ես կուզարկեմ քեզ իմ նորահա թուականներից մէկը:

—Ձիաներ չեմ սիրում:

—Ապա ինչ ես սիրում:

—Առ այսպիսի այժեամբներ, եղջերուներ, կաքաներ եմ սիրում:

—Շատ լաւ, դրանց յետոյ իմ որսերից որն կենդանի մնացած կը լինի, քեզ համար կուզարկեմ:

Մտածները իմացում տուին, թէ ձիաները պատրաստ են:

Բէկը հորս-սկալութիւն յայտնելով տանուտէրին, դուրս եկաւ նրա անից, դրան առջև կանգնացրել էին գեղեցիկ նոյնը, ինքը ծերունի խաչն ձիու ապաւանդակը բռնելով, նստեցրեց բէկին: Դա պատուի մեծ նշան էր, որով տանուտէրը ցոյց էր տալիս իր ծառայութիւնը դէպի պատուեկի հիւրը: Նստելով ձիու վրա, քուրդը ցեղապետը շարժեց ձեռքի երկուսն ինքուր, խաղացրեց ձին, և մնաց բարով ասելով տանուտէրին, հեռացաւ: Ծերունին երկար անաւթ կանգնած, նրա ետեկը նայում էր: Նա տեսաւ, թէ որպէս բէկը իր ձին կրկին թուցրեց իրանից, արձանագնելով կամուրջը, որի վրայ ինչ անց էին կենում, նրա կարծելով, թող և անգոր արարածները միայն: Նա տեսաւ, թէ որպէս հետամուտ եղաւ նա թիւրքի միջից յայտնվող նապատականին, և արժուի արագութեամբ նրա ետեկը հաննելով, ցցեց նիզակը խեղճ անասունի կողքին: Այդ բոլորը տեսնում էր նա, մի և նոյն ժամանակ նրա գլխում անց էին կենում այսպիսի մտածութիւններ: «Ինչու այսպէս է երկրի և երկնի գառատանը, քուրդը հաց չունի ուտելու, հաջ վարում է, ցանում է և նրա համար պաշար է պատրաստում... քուրդը գեղեցիկ նոյնը ընծայ է ըստանում, նստում է, զուգահեռում է, գետնից դուրսնում է իր տանի տակ, իսկ հայն է տալիս նրա փողը... հայը, որ բացի աւանակից մի ուրիշ անասունի վրա նստելու իրաւունք չունի...»

(Կը շարունակվի)